4035

ՄԵՂՈՒ
ՄԵԾԱՑԵԱԼՈՑՆ
ԵՒ
ԶՕՐԱՑԵԱԼՈՑՆ
ՀԱՄԱՐ։

ՄԵՂՐԻ
ՄԵԾԱՆԱԼՈՑՆ
ԵՒ
ԶՕՐԱՆԱԼՈՑՆ
ՀԱՄԱՐ։

Թարգմանութիւն։

Ի հայրապետութեան Տ՟ն ՅՈՎ-ՀԱՆՆՈՒ կարբեցւոյ սրբազնասուրբ կաթուղի-կոսի ամենայն հայոց։

Հրամանաւ Տեառն ԲԱՂՏԱ-ՍԱՐԱՅ իշխանազնի Ջալա-լեան սրբազան Արքեպիսկո-պոսի և մետրապոլտի Հայ-ոց համայն Աղուանից։

Ի ՇՈՒՇԻ
Յամի Տեառն 1833

Երբ որ մեր փրկիչն ասումէր,
թէ ինքն է նա որ ամէն մարդ ա-
զատ է անում։ (Յօհ. Ը. 32. 33։)
հրէաներն տրտնջումէին նորանից։
Ինչու որ՝ կարծումէին թէ ծառայ
չէին. և սրա համար նորանց ամբար-
տաւանութիւնն շատ շարժվեցաւ և
նեղացաւ Քրիստոսի ասելումն. թէ
ծառայ էին։ Նա՛ իրաւ էր որ ծառայ
էին. և էսպէս էլ ամէն մեղաւոր մարդ
ծառայ է, թէ և ինքն իսկի չիմա-
նում. մինչև որ Քրիստոս ազատ ա-
նէ նորան։ Նա՛ որքան երկար ժա-
մանակ որ նա էս վիճակիս մէջ մը-
նայ, էնքան էլ նորա կապանքներն
պինտ և սաստիկ են լինում և ինքն
տկար և անկարօղ է դառնում որ շատ
դժուար դուրս գայ և ազատութեանն
համնէ։ Մեղքն մին էնպէսի սաստիկ
տէր և մեծաւոր է, որ իրան ծառա-
ներին իսկի հանգիստ չի տալիս,
բայց միշտ և անդադար վրայ անե-

լով տանում. նորանց մին բանից մի-
կէլ բանի մէջ, և էնքան երկարացը-
նում իրան իշխանութիւնը մինչև
որ՝ մարդոյն մահի մէջ հասցնէ։
Մեղքի ճանապարհն էնպէսի ճա-
նապարհ է, որ նորանում անկարելի է
հանգիստ կանգնիլ՝ դադարիլ և միտք
անելը. ինչպէս որ մին մարդ որ մին
բարձր սարից դէպի ցած կողմն է
գնում։ իսկի չի կարող դատարիլ՝
բայց ամէն մէկ քայլով (шагъ) ա-
ւելի շուտ առաջ է վազում։ մինչև
որ սարի ցած կողմն հասնի։ Հենց էս
մտքովս սուրը առաքեալն գրում
թէ դուք ծառայ էիք անօրէնու-
թեանն՝ անօրէնութիւն գործելոյ
համար։

Անօրէնութեան ծառայ լինիլն
անդարձ և անպէտք մեղաւորի ճըշ-
մարիտ և յատուկ վիճակն է։ Ա-
զորդ է որ ամէնքն հենց մին կերպ
մեղքի չեն ծառայում։ Մինն կայ որ
իրան անձըն մատնում հարբեցո..
ղութեան, մէկէլն պոռնկութեանն, մէ-
կէլն նախանձու, մէկէլն արծաթա-

սիրութեանն, և կամ ուրիշ գարշելի
մեղքերին։ բայց էս ամէնս մէնակ
մեղքի իշխանութե զանազան կերպա-
րանք են, որ մարդկանց կերպ կերպ
բնութիւններին պէս հնարված և
կարգված են։ Բայց հենց էն ամէն-
քըն էլ ծառայ են անօրէնութեան,
և ամէնքն որ մեղքին ծառայելուց
չեն դադարում, օրէցօր բռնադատ-
վումեն որ իրանց գործոյ մէջն ա-
ռաջանան։ իբր անօրէնութեան ծա-
ռայք անօրէնութիւն գործելոյ հա-
մար։ Մեղքի էս առաջանալն և զօ-
րանալն մենք հիմիկ աւելի յայտնի
ցոյց կըտանք էս հետևօղ խօսքերովս։

Ա.

Ամէն ով որ իրան անձըն ծառայ
է մատնում մեղքին ինչ կերպով որ
լինի, նա ընդունում էն կանոնըն
և խորհուրդըն՝ որ ամէն մեղքի հա-
մար ճանապարհ է պատրաստում։ Էս
կանոնս և խորհուրդս էն է՝ որ պէտք
չէ Աստուծոյ օրէնքին և կամքին
մտիկ անելը ինչ ժամանակ՝ որ նա

մեր ցանկութիւններին հակառակ է կենում։ Եթէ դուք էս կանոնը ընդունիք, ապա իսկի մին բան չըկայ որ կարենայ խափանել և յետ քաշել ձեզ էն չար բաներից որ ձեր սիրտըն ցանկանում է նորանց։ Կարելի է որ դուք ամէն չար և գէշ գործք չըկատարէք, բայց եթէ ձեր հոգին էնպէսի մտածմունք և խորհուրդ ունի, ապա ոչ թէ աստուծոյ վախն, բայց մինակ մարդկանց երեսպաշտութիւնն կամ ձեր շահի և կամ ձեր փառքի սէրն խափանում է ձեզ. որ չար գործ չըկատարէք։ Օրինակ ասեմ։ Եթէ դուք մին անգամ ձեր անձներից թոյլ տաք որ գողութիւն անէք, ապա հեշտ կը լինի որ էն անհոգութենովը շնութիւն, յափշտակութիւն կամ սպանութիւն էլ գործէք եթէ նորանցով փորձվիք և յոյս ունենաք՝ որ պատժից փախչէք։ Հենց էսպէս է լինում որ նա որ աստուծոյ մին պատուիրանքըն քանդում է, էլ ամէն պատուիրանքներըն է քանդում պատճառն որ՝ հենց էն աստուածն.

որ մին մեղք խափանում է, հենց ամէնըն էլ խափանում է. և նա որ յօժար կամօք հենց մին բանի մէջ նորա դէմ մեղանչում է, նորա իշխանութիւնըն և օրէնքն հենց էնպէս դէն է քցում. ինչպէս որ նա՝ որ շատ անգամ ամէն բանի մէջ անհնազանդ է։

Իսկ եթէ աստուծոյ վախն մեր անձներըս չըբռնէ և կառավարէ, ապա մարդկանց վերայ մտիկ տալն իսկի բաւական չէ որ մեզ մեղք գործելուցն յետ քաշէ։ Պատճառն որ՝ առաջ շատ անգամ և շատ կերպով կը լինի որ ծածուկ մեղք գործենք, բայց ծածուկ գործած մեղքըն շուտով պիտի դուրս գայ և յայտնի խայտառակութիւն դառնայ. ինչու որ՝ մարդըն իրան ամէն հնարքներովն և աշխատանքներովն չի կարող որ իրան հոգոյ յատուկ բնութիւն և տիրապետող ցանկութիւնըն երկար ժամանակ ծածկէ։ Երբ որ սաւուղ թագաւորն մին անգամ Աստուծոյ օրէնքն դէն քցեց նորանով որ ամաղէկացոց ազգըն

Ստուծոյ կամքին պէս չըպատժեց՝ ապա նորա միտքն ամէն կերպ չարութեան մէջ ընկաւ. նախանձով ատելութեանով և չար կամքով լըցված շատ անմեղ մարդկանց սպանեց. խորհուրդ առնելոյ համար կախարդ կնկան մօտ գնաց և վերջն ինքն իրան սպանելով իրան ողորմելի կեանքն վերջացրուց։

Բ.

Ամէն մեղք որ կատարումենք, փըչացնում մարդոյ էն ղգուշաւորկամքն. որ նորանով կամենում, մեղքին հակառակ կենալը և էնպէսի անհոգութիւն է ծնում, որ ամէն յոյսն կտրում։ Հոգոյ սրբութիւնն նման է մարմնաւոր յատկութեանն որ յիստակ շրերով երևում. ինչու որ շարժում մարդոյն՝ որ ամէն բանից հեռանայ՝ որ կարենայ պղծել իրան միտքն կամ հոգին. բայց երբ որ մին անգամ մեղքի ծառայութեան մէջ ընկնինք. էն ժամանակն էս ղգուշութիւնս և ջանք անելն կորչում։

Էն երեխան որ միշտ պատռված և կեղտոտ շորեր է հագնում, իսկի ամօթ չունի և իսկի հոգս չի անում։ որ իրան շորն յիստակ լինի։

Երբ որ մարդն առաջին անգամն մեղաց մէջն է ընկնում, էն ժամանակն նորա խղճմտանքն շատ հակառակում է և տանջում նորան։ Ապա կարելի է որ նա միտք անի՝ թէ ես իսկի մին ժամանակ մին էլ մեղք չեմ գործիլ բայց երբ որ փ ըձուին նորոգվում է և մին էլ գալիս է և նորան հակառակ կենալոյ պատճառներն թուլացնումեն. ապա մարդն շատ հեշտ թալանի պէս փորձողի ձեռքն է ընկնում։ Ապա խղճմտանքի ձայնն. և յանդիմանութիւն սուս է լինում, նորա սիրտն քարանում է և պընտանում։ Այս ասում է իրան մտքումն թէ յոյս չըկայ. ինչու որ՝ օտար ճանապարհ սիրեցի. սրա համար կըգնամ հիմիկ նորա վերայ։ Էն առաջինն ներս պրծած փորձանքների մէջն ասայ. թէ մինչև էստեղ կըգնամ, և էլ աւելի հեռու չեմ գնալ. բայց հիմիկ

էն ամէն խոստմունքներըն ոչինչ են համարվում։

Պզտիկ ձանձն, երբոր բոլի սարած տան մէջըն ընկնի, իսկի մին բան կարօղ չէ անել իրան անձըն փրկելու համար. բայց նորա ամէն ջանքն միայն նորա թևթև թևերըն էլ աւելի կապումէ և իրար խառնումէ և նա մին քանի ժամանակ հակառակելուց ետև իրան ազատութենիցն և իրան կեանքիցն զրկվումէ։

Գ.

Ամէն մեղք, որ կատարումենք, ո՛չ մէնակ հակառակ կենալու զօրութիւն է թուլացնում, բայց էլ աւելի մին անկարգ ցանկութիւն է ծնում մեզանում, որ էն մեղքն մին էլ գործենք և կատարենք։ Էս բանըս կարօղ ենք զօրքի նմանացնել. պատճառն որ՝ երբ որ նորանց մին մասն թշնամեաց մօտն է անցնում, մենք բռնադատվումենք որ երկու տակ նեղութիւն քաշենք. առաջ նորա համար էր որ մենք ինքներս տկարա-

նումենք. և երկրորդ. նորա համար որ թշնամիքներըն զօրանումեն։ Ահա հենց էսպէս էլ մեղքն՝ որ մին անգամ կատարումենք՝ թուլացնումէ մեր հոգու զօրութիւնըն. և զօրայնումէ մեր մեղաւոր ցանկութիւններըն. ինչպէս որ շատ յայտնի հարբեցողութեան արծաթասիրութեան և անառակութեան և սրանց նման մեղքերի մէջն տեսնումենք։ Մեղքն առհասարակ խաբումէ մեզ էն սուտ խոստմունքովն որ եթէ մենք մին բանի համար նորա կամքն կատարենք՝ էլ աւելի բան չի ուզիլ մեզանից կամ թէ հաւատացնումէ իրան խաբված ծառաներին թէ մեղքին հնազանդ լինիլն կըթեթևայնէ ցանկութիւններին տանջանքըն։ Ուղորդ է որ էդ բանդ մին ժամանակ էդպէս լինի, բայց մեղքն չի ուշանալ այլ երկու սան զօրութենով յետ կըդառնայ։ Որքան որ հնազանդ լինինք նորան էնքան էլ աւելի սաստիկ հրաման է տալիս մեզ. և օրէցօր նոր բան է խնդրում մեզանից։

Նա որ մին անգամ կորուստի ճանապարհովն գնացել է, կարող է փորձառութենով ասել՝ թէ հազար տակ էլ աւելի դժուար է յետ դառնալը քան թէ սկզբումն էս ճանապարհիս մէջ իսկի չի մտնել։ Տզրկի (սուլուկ-նէ) ծարաւութիւնն արիւնի համար, կամ հարբեցող մարդոյն գինոյ համար․ շատ տկար պատկեր է էն հոգոյ կըրակով վառուած ցանկութիւններին երևացնելոյ համար, որ մեղաց ճանապարհումն և ծառայութենումն է կենում։

Դ․

Եթէ մենք մեր անձներիս թոյլ տանք որ հենց մէնակ մին մեղք գործենք, ապա շուտով կըբռնադատվինք որ ուրիշ մեղքերի մէջն էլ ընկնինք․ էն առաջվան մեղքըն ծածկելոյ և կամ թողութիւն ստանալոյ համար։ Էդ ճշմարտութիւնդ էնքան յայտնի է որ իսկի պէտք չէ լայն ցոյց տալ և հաստատել նորան․ թէ սուրբ գրքերըն և թէ հենց մեր հա-

սարակ կենցաղավարութիւնն սրա համար շատ օրինակներ մեր առաջիս է դնում։ Երբ որ մեղքն կատարվեցաւ․ ապա առաջին քանն՝ որ մեղաւորի միտքն է գալիս էն է՝ որ ջանք անելով իրան մեղքն ծածկէ կամ թէ որ ծածկիլն անկարելի է՝ որ պատճառներ հնարելով էն մեղքըն ներելի շինէ։ Առաջին մարդ ադամն մեղք գործելուց ետև ջանք արաւ՝ որ ծառերի միջումն թագ կենայ, բայց երբ որ չըկարողացաւ աստուծոյ երեսիցն ծածկվիլ, էն ժամանակն նա սկսեց մեղքի պատճառն էն կնկան վերայ դնել, որ աստուած տուաւ նորան՝ ասելով թէ նա ինձ փորձութեան մէջ քցեց։ Հենց էնպէս էլ դաւիթ թագաւորն օրինակ է մեզ համար։ Երբ որ նա մեծ մեղք գործեց առաջ հնարք ուզեց՝ որ էն իրան մեղքըն ծածկէ․ և երբ որ չըկարողացաւ ծածկել․ մարդասպանութիւն գործեց։ Ահա հենց էսպէս էլ էս օր է լինում․ նա որ մին մեղք է գործում․ շուտով

կրբունադատվի որ եւ ուրիշ մեղքի մէջ ընկնի։

Ե.

Ամէն մէկ մեղք որ գործումենք՝ մեղաւոր սովորութիւն է ծնում մեզանում, կամ եթէ էս սովորութիւնս հենց առաջ մէզանում կար, հաստատումէ և զօրացնումէ նորան։ Եթէ մենք մեր ամէն մէկ մեղաւոր գործքին ջոկ ջոկ մտիկ անենք, նորանք նմանվումեն ջրերի կաթիլներին՝ որ շատ քիչ զօրութիւն ունին, բայց երբոր նորանք սովորութիւն են դառնում, էն ժամանակն նմանվումեն շատ սաստիկ վարար գետի, որ նորան իսկի մին բան չի կարող դէմ կենալ։ Հարբեցող մարդն առաջուց յատուկ ծարաւութիւն չունի հարբեցնող խմելիքին համար․ և կարելի է որ աշխարհական տրտմութիւնն կամ ունայն ընկերութեան սէրն առաջ շարժեցին նորան որ թեթևամիտ և խմօղ մարդկանց հետ նստի․ բայց երբ որ խմելն սովորութիւն է դառնում և նորանում զօրանում է, ապա հարբեցօղութեան խեղձալի ծառայ է լինում։ Թէ և նա տեսնումէ՝ որ օրէցօր իրան ապրանքըն փչայնումէ, կեանքըն կարճայնումէ և հոգին կորցնումէ․ բայց չի կարող գինին կամ արաղըն թողել՝ այլ օրէցօր աւելի ցանկանումէ նորան։ Արծաթասէրն կամ ագահն առաջուց փող էր և ապրանքին անչափ ցանկութենով չէր հետևում․ բայց երբ որ մին անգամ սկսեց իրան անձըն արծաթի սիրոյն մատնել՝ իսպառ նորա ծառայ է դառնում․ և ամէն չար հնարք գործ է ածում․ որ մէնակ փող հաւաքէ։ Նա խաբումէ և սուտ երդում է ուտում և աղքատներին զրկումէ՝ մէնակ նրա համար որ փող ստանայ։ Գիշեր և ցերեկ հոգս է անում որ ինչ կերպով որ լինի իրան ապրանքի ցանկութիւնըն լցնէ․ և սրա համար իսկի հանգիստ չի գտնում։ Եթէ մին բան կորցնէ՝ մին անհնարին տրտմութիւն

պիտի լինի։ Ո՛վ կարդացող, մի թէ դու էլ էսպէսի վիճակի մէջ ես։

Լսիր և թոյլ տուր ինձ, քո բարեկամին՝ որ յայտնի և համարձակ խօսիմ քեզ հետ։ Հաստատ իմաց որ առանց տարակուսանաց պէտք է քեզ որ կամ յետ դառնաս կամ յաւիտեան դժոխքի մէջ կորչիս, և էդ էլ շատ շուտով պիտի լինի։ Կըլինի որ անհաւատներըն ասեն քեզ, թէ ահ չըկայ, բայց մեռնելոյ ժամանակն հենց նորանք առ հասարակ յայտնի ցոյց են տալիս, թէ հենց իրանք չըհաւատացին էն բաներին, որ ասացին կամ գրեցին։ Ճշմարիտն ասումեմ քեզ՝ թէ աստուած կայ՝ որ ամէն մարդկանց դատումէ. և քիչ ժամանակից ետև հենց դու էլ պէտք է երևիս նորա առաջին՝ որ պատասխան տաս Ապա կամենումե՞ս հենց դու ինքդ քո անձըդ էն կրակի մէջ քցել. որ իսկի չի անցնել և որ նորանից ոչ ով յաւիտեան չի փրկվել։ Էն ահաւոր պատիժն յատուկ սատանայի և նորա հրեշտակներին համար է պատրաստ-

ված. ապա եթէ դու էլ գնաս էն տեղ՝ ճշմարտութենով պիտի ասվի. թէ դու ուժով ես բռնում էն խաւարի արքայութիւնըն։

Բայց բաւական չէ որ յետ դառնաս, բայց հենց աստուծոյ մօտ պէտք է դառնաս։ Պատճառն որ՝ Տէրն ասումէ, թէ որ յետ դառնաք, ինձ մօտ յետ դարձէք։ (Երեմ. Դ. 1։) Եթէ ես քո հիմիկվան օգուտըն մենակ կըկամենայի հաստատել, ապա ես խորհուրդ կըտայի քեզ, որ մենակ յայտնի մեղքերըն թողես, և արթուն և զգոյշ կանէի քեզ որ փախչիս էն չալիքներից որ մեղքի ձեռումն քեզ վերայ կըգան։ Անասունքներըն թէև միտք չունին, բայց բնական շարժմունքով փախչումեն էն բաներից որ կորուստ են բերում իրանց վերայ ինչպէս որ թօւն զուր տեղն է քցվում եթէ թռչունն տեսնէ։ Ծովի ձկներըն յետ են քաշվում ջրերի շատ խոր և սառնիկ պտուտիցն։ Ապա մարդն բանական, խելքով և բաց աչքով կըմտնէ՞ էն թակարդին մէջ,

որ իրան համար սարած է. և անհոգ
կըգնայ կորուստի անդունդի մէջն։
Բայց իմ ջանքս և կամքս մէնակ էն
չէ, որ մէնակ ես հիմիկվան վտանգ-
ներիցն և ահիցն զգուշացնեմ քեզ,
բայց իմ կամքս և աղօթքս էլ աւելի
էն է՝ որ փրկվիս մեր տէր աստու-
ծոյ էն բարկութենէցն որ պիտի գայ։
Սրա համար իմացէ՛ք, էն որ ասու-
մեմ քեզ։ Թէ և ես աշխարհքիս
մեծ և յայտնի մեղքերիցն հեռանաս.
բայց էնպէս էլ կարելի է՝ որ քո մե-
ղաց մէջ մնաս և յաւիտենական կո-
րուստի մէջ ընկնիս։ Բո վտանգդ և
ահդ մէնակ յայտնի մեղքերիցն չի
գալիս։ Կարելի է որ դրսի և յայտ-
նի մեղքերէն մտիկ տալով՝ սատանան
դուրս հանվի, բայց նա ներսումն կը-
ծածկվի և ամբարտաւան անձնասի-
րութեան բերդի մէջն կընստի։ Ոչ
թէ դրսի կեղտոտութիւն է էն՝ որ աս-
նում. քեզ կորուստի մէջն, բայց ներ-
սի հիւանդութիւնն, որ ամէն չարիք
նորանից են դուրս գալիս։ Ինչու
որ ներսից մարդկանց սրտիցն չար

խորհուրդներ են դուրս գալիս, շը-
նութիւններ, պոռնկութիւններ, գո-
ղութիւններ, ոպանութիւններ, ագա-
հութիւններ, չարութիւններ, նեն-
գութիւններ, պիղծ ցանկութիւններ,
նախանձութիւն, հայհոյութիւն, ամ-
բարտաւանութիւն, անզգամութիւն։
(Մարկ. է. 21. 22։) Ամէն յայտնի
մեղք որ կեանքի մէջ գործքով կամ
խօսքով տեսնըվումէ՝ քո սրտի ներսի
ցանկութեան համար վկայումէ։ Ա-
թէ էս ապականված աղբիւրն չի
սրբվի, ապա զուր տեղն ջանք կանես
որ նորանից բղխած գետերըն սրբես։
Լաւ է որ մեղք գործելուցն դա-
դարես, միայն թէ արդարութեանով
դադարես նորանից։ Սրա համար մէ-
նակ մին չար կայ. էն որ մեր փըր-
կիչն ցոյց է տալիս՝ մեզ ասելով, թէ
ապաշխարեցէ՛ք և աւետարանին հա-
ւատացէ՛ք։ (Մարկ. ա. 15։) Ամանց
ապաշխարութեան և հաւատքի ամէ-
նըն որ անես օգուտ չի բերիլը բայց
եթէ դու քո անձն մեղաւոր և ան-
պիտան համարելով կարենաս ամէն

ուրիշ յոյսըն թողելը և միայն Քրիստոսին բոլոր սրտով հաւատալ, ապա առանց տարակուսանքի կըփրըկվիս: Ինչու որ՝ նորա արիւնն մեղաւորներին համար թափվեցաւ. և հենց մեղաւորների գլխաւորի համար էլ թափվեցաւ: Նորա հնազանդութիւնն մինչև 'ի մահ աստուծոյ առաջին էնքան հաճոյ և ընդունելի էլաւ, մինչև որ ամէն մեղաւոր, թէ և նորա կեանքն ամէնից մեղաւոր և անառակ էլած լինի, Յիսուսի համար ընդունելի լինի աստուծոյ առաջին, թէ որ նորա մօտ գայ Յիսուսի անունովն և նորան աղաչէ Յիսուսի արդարութենովն և արդիւնքովն: Աստուծոյ յաւիտենական որդին ոչ միայն քեզ նման մարդկանց համար հնազանդ էլաւ և մեռաւ. բայց էլ հիմիկ ա՟յ աջ կողմն է նըստում, որ նորանց համար մարդ էլաւ, երկրի վերայ ման եկաւ և մեռաւ: Նրա համար էլ կարող է բոլորովին կենդանի անել էն ամէնին, որ նորանով մօտենում են աստուծոյ

մօտ. ինչու որ՝ միշտ կենդանի է որ նորանց համար բարեխօսութիւն անէ: (Եբր. Է. 25:)

Ով կարդացող, եթէ դու կարողանաս էս վարդապետութիւնըս ընդունել, դա կըբժշկէ քո ցաւըդ և հիւանդութիւնըդ: Անտարակոյս փըրկութիւն պատրաստէ քեզ համար, թէ որ դու կարողանաս պարզ մըտքով և բոլոր սրտով նորան ընդունելը, իբր աստուծոյ ողորմութեան և շնորհաց պարգև, որ միայն Յիսուսի Քրիստոսի քաւութենովն պատրաստվեցաւ քեզ համար: Եթէ կարողանաս քո մեղքերըն էս մեծ պատարագի վերայ խոստովանիլը, ապա աստուած հաւատարիմ և արդար է, որ քո մեղքերըն թողէ քեզ, և քեզ ամէն անիրաւութիւներից սրբէ: Աստուած ոչ քո զղջանալոյն, ոչ քո աղօթքին և ոչ քո արտասունքին չի նայիլը, որ նորանց համար քեզ թողութիւն և փրկութիւն տայ. բայց մի միայն էն է ընդունում և էն բանին է նայում. որ նորա որդին կա-

տարեց և քեզ համար քաշեց։ Ապա եթէ քո յոյսդ ոչ քո աղօթքին և ոչ քո ողորմութեան վերայ հըդնես, բայց միայն Յիսուսի վերայ, որ փըրկեց քեզ, և հենց նորա անունովն գաս. որ ողորմութիւն խնդրես, ապա յաւիտենական կեանքըն պատրաստ է քեզ համար։ Այն՛ որ ժամանակ որ էս վարդապետութիւնս քո խռովված հոգույդ հանգիստ տայ՝ հենց էն ժամանակն էլ քո սիրտդ էնպես կըսրբէ, որ քո առաջվան ամէն ճանապարհներըն ատելի և գարշելի երևին քեզ, և պարկեշտութիւնն և արդարութին և ածպաշտութին քո հոգույ ուրախութին լինին։ Բայց թէ որ քո սիրտդ դեռ մեղքով քարացած մնայ, թէ որ Յս Քսն և նորա էն փրկութին՝ որ իրան արդիւնքովն պատրաստված է և ողորմութենով տըվվումէ քեզ իսկի քեզ համար ուրախութի և մխիթարութի չեն, բայց էլ աւելի քո մեղքերդ ներհակ են երևում ապա իմաց, որ էլ ուրիշ անուն չըկայ երկնքի ներքևն մարդկանց տըվված որ նորանով կարելի

լինի քեզ ապրել. բայց միայն Յիսուսի Քրիստոսի անունն. և ապա մեռնելոյ սահաթումն քանի տրտում կըլինի քո հոգիդ, երբ որ դու միտքըդ կըբերես, որ քո կեանքի մէջն մին անգամ փրկութիւն տուօղ ճըշմարտութիւնըն լսեցիր՝ և ընդունելոյ տեղակ անարգեցիր։

Երանելի են էն ամէնքն. որ Յիսուսի Քրիստոսի անունովն յետ են դառնում նորա և իրանց հօր մօտն նորա և իրանց աստուծոյ մօտն. և ապա իրանց մեղքերիցն սրբվումեն, և սրբութեան պտուղ են բերում։ Նորանք էլ կառաջնան ճշմարտութենով, և բարեպաշտ գործքերով։ Արդարըն պինդ կըբռնէ իրան ճանապարհըն, և նա որ սուրբ է ձեռքով, սիրտ կառնէ. (Յոբ. ժէ. 9։) Ամ ծառայութիւնն նորա համար օրէցօր հեշտ կըլինի. Ճշմարտութիւնն էլ աւելի պարզ կերևի նորա առաջին. նորա հետ դառնալոյ հաստատութիւնն կըզօրանայ, նորա աստուածպաշտութիւնն և սրբութիւնն օրէ-

ցօր աւելի արմատ (+եօ+) կըքցէ. Ի-
րան հաստատ ընեւթ քյան կընո-
րոգէ նորա զօրութիւնըն. և թէ
նեղութիւն և թէ ուրախութիւն,
թէ առանձին լինին և թէ ընկե-
րութեան մէջ լինին, թէ աստուա-
ծոյ սատէկ խրատն և թէ նորա շը-
նորհաց քաղցրութիւնն, ամէնն առ
հասարակ օգնական կըլլինի նորան՝
որ օրէցօր աւելի պատրաստ և ար-
ժանի լինի սրբոց ժառանգութեա-
նըն լուսոյ մէջն էն նոր գալու աշ-
խարհքումն. Ամէն։